

ՕՐՈՒԱՆ ԱՍՈՒԼԻՍԸ

(Բացման խօսք Պ. ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ)

Երբոր առաջին անգամ գրական դատաւարութեան մը լուրը տարածուեցաւ՝ ամէն ոք հետաքրքրուեցաւ անով. կռուի մը ականատես ըլլալը մարդոց մեծագոյն հաճոյքը պիտի մնայ. երեւակայեցէ՛ք անգամ մը. ամբաստանութիւն մը եւ պաշտպանութիւն մը. կրկէս մը եւ ըմբիշներ. յաղթող մը եւ յաղթուող մը. ո՞վ չուզեր ասանկ տեսարան մը վայելել. ամէնքը վազեցին եկան. պզտիկ յուսախաբութիւն մը սակայն՝ երբոր գետինը փոշիներու մէջ տապալկոյող պարտուած մը եւ քովը, ոտքը անոր կուրծքին, ճակատը դափնիներով պսակուած մէկը չի տեսան:

Գրական դատաւարութիւնը որ ռուսահայերէն եկաւ մեզի, հոսիսներու կողմէն պզտիկ փոփոխութիւն մը կրեց. դատաստանէ աւելի վերլուծումի, դասախօսութեան հանգամանք առաւ. ասով՝ գործին հետաքրքրաշարժ մասը պակսեցաւ թերեւս, բայց գրական ողջամտութիւնը կարծեմ թէ բան մը չի կորսնցուց:

Այսօր ամէնուս ծանօթ քերթողի մը նոր լոյս տեսած մէկ հատորով պիտի զբաղինք: Վարուժան նոր սերունդին երգիչներէն է. ձեր երգիչը՝ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ:

Դպրոցական եղած ատենս՝ կրօնագիտութեան դասատու սորվեցուց ինծի որ Հայ եկեղեցւոյն մէջ մկրտութիւնը եւ կնուսքը միմիայն ջուրով չըլլար. երբեմն հուրով ու սուրով ալ կը կատարուի. նահատակուած երախաներուն մկրտութիւնը այսպէս է: Նոր սերունդին գրականութիւնը ճիշդ այս դրոշմը, այս կնիքը կը կրէ իր վրան. ամէն ինչ տառապանք է հոն. ամէն ինչ աղաղակ ու բողոք: Հայկական ջարդերու ականատես գրականութիւնն է. միտքերը՝